

193. Ֆոնու.

– Ջոր փափագէի եւ յուսայի գտանել ՚ի թերատ յիշատակարանի Մարգարէի գրչի, զանուն Ս. Կարապետ եկեղեցոյ, զտի գնոյն յիշատակեալ յաշակերտէ նորին Վապէ արեղայէ եւ յեպիսկոպոսէ միոյ, յամի 1590, որք գրեն ՚ի կռան աւետարանի ընդօրինակելոյ ՚ի Յովհաննէ Արքայեղբօրէ, եւ նորոգեալ դնեն «Ի դուռն Ս. Կարապետին, ՚ի գիւղաքաղաքն ՚ի Ֆոնաս, ՚ի կաթողիկոսութեան Տէր Ազարեայ քաջ Բաբունապետին, եւ յեպիսկոպոսութեան Տէր Խաչատուր արհեպիսկոպոսին, եւ Տէր Յակոբ եպիսկոպոսին, եւ Տէր Թորոսին»։ որոց առաջինն՝ երեւի վիճակաւոր Ֆոնուսի, երկրորդն՝ նորոգող աւետարանին. ստացողն՝ Մարտիրոս քահանայ, որդիքն՝ Հազարշահ, Մարգիս եւ Բարդողիմէ: Գրիչն Վասիլ՝ յետ կնոջ իւրոյ (Նունիայ) եւ վաղամեռիկ որդւոյն՝ աղաչէ յիշել «զմեր վարժապետն զՄարգարէ քահանայն, որ ոչ ժամանակեաց, այլ փորձանաց հանդիպեցաւ. Աստուած ողորմի իւր հոգւոյն. Ամէն»:

Ի Ֆոնուս վախճանեալ է Ղազար կաթողիկոս Զեթունցի, յամի 1547:

193. Բ. Շիպիլկի.– Թերեւս կրիցէ զանուն Շուպլայ կամ Շուպլաս բերդի, զոր յետ գերութեան Պարոն Լեւոնի՝ (1138-9), եկն գողանալ Մելիք Մահմուտ կամ Ահմատ Դանիշմանեան (52), «եւ բազում մարտիւք մարտուցեալ եւ նետս անթիւս հեղեալ, ոչ ինչ կարաց առնել բերդին. եւ այնպէս գնալով ընդ կատարս լերանցն որ Կուլլայ կոչեն՝ գնաց յաշխարհի իւր»: Զայս բան Ուռհայեցոյն կրկնեալ ժամանակագիրն Կիլիկիոյ, կամեցեալ է նշանակել եւ զնոր անուն լերանցն, այլ ոչ գիտելով՝ դատարկ թողեալ. եւ չէ օտար համարել զայն ՚ի շարս Կուլլակայ լերանց:

196. Մեծքար.– Յետ Յակովբայ կաթողիկոսի թուի առաջնորդ վանացն եւ թեմին կացեալ Գրիգոր Անաւարզեցի, զի գրիչ ոմն մերձաժամանակ՝ կոչէ զնա Մեծքարեցի:– Զտեղի վանացն՝ ամայի

---

Աստեղանուանք. Հանելուկք: Տէրունական աղօթք Զեթունցոց:– Բառք՝ Գործածականք, Գիտականք, Երկրագործականք եւ Բուսաբանականք»: Բառքն առանց որիշ որիշ դասաւորութեան նիւթոց՝ ըստ այբուբենից կարգեալ են ՚ի վերջ գրոցն: